ՀԱՆԴԷՍ ՊԱՐԳԵՒԱՒՇԽՈՒԹԵԱՆ

ԺԵ ԴԱՍՈՒՆ ԱՇԱԿԵՐՏԱՑ

ՄՈՒՐԱՏ ԵՒ ՌԱՓԱՑԷԼ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Տարւոյն դժնդակ և ձմեռնային ժամանակը կ'անցնի, կը թաւալի, յորում մշակք և վաստակաւորք ցրտացեալ և սառուցեալ եղանակին մէջ իրենց քրտին-քով կը պատրաստեն գարնանային գեղեցկութեան քաղցրութեան սերմունքը. և ահա տխուր աւուրց կը յաջորդեն գարնանազարդ աւուրք, և գրեթէ մոռցը-նելով անցեալն աշխատութիւնը և վաստակը։

Այսպէս հայկական աշխարհին սերնդոց և զարմից յոյսերը, նշդեհ և պան-դուխտ մայրական հողէն, հինգ տարուընէ 'ի վեր ջանքով և քրտինքով կը վաս-տակէին վարժարանիս հովանաւորութեան ներքև, և արդ ինչ վիճակի մէջ բաժ-նուին՝ իրենք նախ պիտի վկայեն և ապա ուրիշները։ Պիտի ցուցնեն նախ եթէ ոգին հայկական զարթուցեալ է 'ի նոսա առաւել քան զնունդ մանկական՝ վարժարանիս մէջ՝ մտքի և սրտի կրթութեամբ. լրացած է վարժարանիս բարերա-բաց փափաքը, որ այսչափ տարի իրեն նախընթաց դասերով ընծայեց աղգեր-նուս եռանդուն պատանիս։ Յունիսի 16ը իրենց բովանդակ ընթացից պսակ-ման օրն է. այն օրը՝ յորում Գեր. Տեառն Իգնատիոսի Վ. Կիւրեղեան նախագա-հութեամբը և ներկայութեամբ Քաղաքապետի փոխանորդին՝ և քաղաքիս Շա-հապին և Յուսմնապետին, Գաղղիոյ և Օսմանեան տերութեան հիւպատից և մեծամեծաց, և առաջի բազմութեան վարժապետաց և բարեկամաց պսակուե-ցան վկայականներով և գովեստիւք։

Հանդէսը սկսաւ երաժշտական նուագարանով, որուն յաջորդեց պատանեաց հինգ լեզուով շնորհակալութեան և երախտագիտութեան գրութիւնները, որոնք ընդ մէջ նաև քաղցր երաժշտական երգերով կ'ընդհատէին. ապա հայկական լեզուին մէջ ամենէն յառաջացեալն Պ. Միհրան Ցամտեան ընթերցաւ ուսանա-ւոր մը, յորում հինգ տարուան մէջ ինչ կրթութիւն առնելն և ինչպիսի սիրտ և ոգի ունենալը իւր մեծատոհաց վրայ՝ յայտնի կը բացատրէ։ Եւ ապա նախագահն Տր. Իգնատիոս Գերպայծառ համառօտ յորդորականով մը կը խրախուսէր զի-րենք առաջիկայ նոր ասպարիզին մէջ, որուն շատերը անտեղեակ իսկ էին։

Այս յորդորանաց յաջորդեց ապա Բաշխումն վկայականաց և ընթերցումն իւրաքանչիւրին քաջութեանց և գովեստից մասերը։ Հուսկ յետոյ ամենայն պա-տանիք թէ ուղղորդ և թէ մնացորդք միաբերան վերջին ողջոյն հրաժեշտի տուին առ հանդիսականս և առ Դշխոյն Ծոլուց՝ երաժշտութեամբ, զոր քանի տարի վերջը արդեօք այսպէս միաբերան հայրենեաց հողուն վրայ պիտի հնչեցնեն. սրանը կը թնդար պատանեաց եռանդեան ձայնէն, և սրտի արձագանգ մ'ըլլալը կը յայտներ։

Հանդիսականք, ինչպէս որ եկեր էին աշակերտաց ուսումնական յառաջա-դիմութիւնը և լրումը տեսնալու, այսպէս նաև իրենց ձեռաց աշխատութիւնը և ճաշակն ալ, որ ներկայացուած էր դահլիճին մուտքի մասին մէջ, յորում կը բա-վանդակուէին տեսարանագծութեան, ուրուագրութեան օրինակներ. յիրաւի իրենք աւելի կերպով մ'այս նկարներէն պիտի իմանային նոյն մասին մէջ յառաջադիմելնին քան թէ այլ ուսման մէջ, զորս յայտնի չէին տեսներ։ Այս

digitised by A.R.A.R.@

սրահը դրուած էր նաեւ՝ յառաջացեալ աշակերտի մը Պ. Մկրտիչ Ջօպանեանին երկու իւղանկար պատկերները, որոնց աղէկութեանը և ճշդութեանը վկայութիւններ տուին նոյն անձինքը, մանաւանդ վեննետկոյ Գեղեցիկ արուեստից Ակադեմիային Տեսուչն և քաղքիս օրագիրը, յորոց առաջինը աշակերտէն աւելի վարժապետի արժանաւոր վրձնոյ արդիւնք կը համարէր։

Ահաւասիկ աւարտավարժ պատանեաց թիւը, որոնք ընթացքնին լմնցուցած դարձան 'ի Հայրենիս.

Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՐԸՄՃԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ
Պ. ՎՐԹԱՆԷՍ ՔՈՒՇՆԵՐԵԱՆ ԽԱՐԱՍՈՒՊԱԶԱՐՑԻ
Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՎԱՅԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ
Պ. ՂԵՒՈՆԴ ՄԵԼԻՔԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ
Պ. ԳՐԻԳՈՐ ՍԻՆԱՊԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ
Պ. ՊՕՂՈՍ ԷՄԻՐՋԷԵԱՆ ՊՐՈՒՍԱՑԻ
Պ. ԿԱՐԱՊԵՏ ՍԵՂԲՈՍԵԱՆ ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼՍԵՑԻ
Պ. ԱՆՏՈՆ ԳԸԼՃԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ
Պ. ՊԵՏՐՈՍ ՔԻՒՐՔՃԻՒԱՆԼԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ
Պ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ ՏՐԱՊԻԶՈՆԵՑԻ
Պ. ՅՈՎՀԱՆ. ԳՈՒՐՈՒՊԱԼՔԵԱՆ ԵՒԴՈԿԻԱՑԻ
Պ. ՄԻՍԱՔ ՄԱՍՐԱՖԵԱՆ ՍԱՄՍՈՆԵՑԻ
Պ. ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ ԵՒԴՈԿԻԱՑԻ
Պ. ՏԻՐԱՆ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ ԵՒԴՈԿԻԱՑԻ
Պ. ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ
Պ. ՄԻՀՐԱՆ ՍՏԵՓԱՆԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ
Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ Կ. ՊՕԼՍԵՑԻ
Պ. ՎԱՐԴԱՆ ՄԽԻԹԱՐԵԱՆ ԿԱՐՆԵՑԻ

Ի հաճութիւն ընթերցանելեաց կը դնենք հոս Պ. Միհրան Տամատեանի Պարգևաբաշխութեան առթիւ կարդացած ոտանաւորը իբրև հրաժեշտ մը.

ՎԵՐՋԻՆ ԲԱՆՔ ՀՐԱԺԵՇՏԻ

ԱՌ ԳԵՐԱՊԱՅԾԱՌ ՏԷՐԴ ԵՒ ՅԱՐԳՈՅԱՊԱՏԻՒ ՀԱՐՍ

Զոր օրինակ հեղասահ ի լաստափայտ ծովածուփ
Զամենհի ալիս նաւորդք անդընդահերձ փեռեկեալ,
Արշաւելով՝նդ անոլորտ անեզրական դըրունս հողմոց
Եւ ընդ ժայռ և ընդ խութ կոծեալ բաղխեալ ընդ ալիս,
Տաղտուկ յերկար 'ի տարուբեր սահմանակոծ ծըփանաց
Ընձկարեկ անձկակարօտ առ ծովափունս ապըրնջական
Առ խուռն նըշմար ցամաք հողոյ 'ի բիւր մաղթանս հառաչեն,
Զոր թէ յանկարծ 'ի հեռուստ լիցի նոցուն նըշմարել
Հըրճուին զըւարթ ծափ ըզծափի, զաղէտս համակ մոռանան.
Սապէս և մեք սիրասնունդ չորեքտասան աշակերտք
Ընդ նովին քաղցըր լըծով և ընդ նովին թեթև բեռամբ
Ի հընգից ամաց հետէ սաղապաճեմ նըշդեհեալք
Տարադիր 'ի հայրենեաց, 'ի սիրելեաց տարանջատք
Տարուբերեալ յաշխարհածովըն գիտութեանց համատարած,
Միշտ անդուլ թիավարեալ, չեղեալ երբեք դասալիք
Մինչ ուրեմն զընթացս մեր աւարտավարժ հանեալ յամբոկ՝
Հասաք անվընաս 'ի տենչալին նաւահանգիստ։
Այլ ընդ էր կորակոր, եղբարք, զերկիր նըշմարէք,
Զի՞ է՝ զի թախծութիւն 'ի դէմըս ձեր բերէք սուրբ.
Գիտեմ, գիտեմ զիրաւացի առիթ ձերոյ տըխրութեան.
Ըզցամ ըզնոյն ապաքէն և ես ընդ ձեզ տըրտմակից,
Զի թողումք աստանօր թողումք ըզմեր անձկալիս,
Ըզհարըս պատուական, ըզբարեկըրօն բարերարս,
Թողումք ըզվարդապետս և որք ընդ մեզ կենակից,
Ըզվարժարանս համբաւաւոնն, ըզբուրաստանս երախտեաց,

digitised by A.R.A.R.@